

ԱՐԴԻ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹԻՒՆԸ

ԵՒ ԵԿԵՂԵՑԻՆ

(Շար. տե'ս «Բազմավեպ» 1969, ք. 1-3, էջ 44)

ԵԿԵՂԵՑԻՆ՝ ՆԵՐԿԱՅ ԱՇԽԱՐՀԻ ՄԷ.Ձ

5. Խաղաղութիւն եւ ազգերու հասարակութեան կառուցում

Հարցականներ կը շրջապատեն ամէն կողմէ մարդկութեան վիճակը, անձկութիւններու եւ յոյսի, ուրախ եւ յոռի նախատեսութիւններու շարժառիթներ կը փայլին ու կը մարին, փարատել կը թրւին ու դարձեալ կ'արծարծեն սպառնացող վտանգներու երկիւղը: Մարդիկ կը ձգտին խաղաղութեան, կը բանակցին, կը սարքեն համագումարներ, բայց խռովութիւններու, թշնամութիւններու եւ զինեալ պայքարներու կամակոր յարակալութեան դիմաց, շատեր կը փորձուին դուցէ՛ հարցնելու տարտամ սկեպտիկութեամբ մը. գի^ոնչ է խաղաղութիւն. մատչելի իրականութի^ւն մը՝ թէ ցնորական երազանք:

Անհաւատարակչութիւններու այս ան-
ստոյգ կացութեան մէջ, կամ եթէ կ'ու-
զէք, մասամբ ապահովուած հաւասարա-
կըշտութեան մը՝ հակադիր ոյժերու եր-
կիւղէն, Տիեզերական Ժողովի պատգա-
մը կը ծագի իբրեւ վառ ծիածան մը յոյ-
սի, խրախոյս տալու համար բարեացա-
կամ մարդոց քայլերուն՝ փնտռողութի
ճամբուն մէջ ճշմարիտ խաղաղութեան .
իսկ անոնց՝ որ ձեռքերնուն մէջ կը բռն-
են մարդկութեան ճակատագիրը՝ դեռ
անգամ մըն ալ չահաւէտ առիթ մը կ'ըն-

ծայէ խորհրդածելու եւ կշռելու իրենց
սլատասխանատուութիւնները :

Gaudium et spes Սահմանադրութեան
վերջին գլուխին մէջ շօշափուած նիւթը
կը բովանդակէ անտարակոյս ամէնէն
կենսական հարցերը, որոնք այսօր միջ-
ազգային գետնի վրայ կը կանգնին մարդ-
կութեան գիտակցութեան առջեւ: Կը հա-
մապատասխանեն նաեւ մարդկութեան
խոչոր զանդուածի մը ամենաջերմ ակըն-
կալութիւններուն, ինչպէս կը մատնանը-
շէր արդէն ժողովէն երկու տարի առաջ
Յովհաննէս ԻԳ.ի հրատարակած Pacem
in terris (Երկրի վրայ խաղաղութիւնը)
Շրջաբերականը, ուղղուած՝ բոլոր բա-
րեացակամ մարդոց:

လှသွေးလှပေ ပဲနဲ့ ပဲနဲ့

Ի՞նչ է խաղաղութիւնը, հարցնենք մենք
ալ: Այնքան անօրեայ դարձած զաղափար
մը՝ որուն բովանդակութեան խորութիւ-
նը՝ կը խուսափի գուցէ մեր ուշադրու-
թենէն, երբ զայն կը լսենք կամ կ'արտա-
բերենք՝ անօրեայ զբաղանքներու սովոր-
ական հասկնալով:

Շատերս պիտի գոհանայինք զույց խաղադուծիւնը սահմանելով՝ իբրեւ լոկ բացակայութիւնը պատերազմի կամ կռիւի: Ժողովը կ'ազգարարէ մեզի ամէն բանէ առաջ՝ թէ խաղադուծիւնը ժխտական

դադաւիար մը չէ, չի սահմանուիր բացա-
սական եզրերով: Պիտի փորձուէինք զու-
յէ խաղաղութիւնը վերածելու հակադիր
ոյժերէ ապահովուած հասասարակչու-
թեան մը, կամ հղօր աղբի մը տիրապե-
տութեան: Սակայն՝ այսօրինակ խաղե-
րու վրայ հիմնուած անդորրութիւն մը՝
անհղօր է ընծայելու տեսականութեան ուր-
եւէ երաշխիք. որովհետեւ չի յենուր ըն-
կերութեան բարեկարգութիւնը ծնանող
բարոյական ազդականներուն վրայ, որոնց-
մով կը յայտնուի մարդկային կամքին
անկեղծ միտումը դէպի խաղաղութիւն:

Խաղաղութիւնը դարական տուեալ մըն է
 եւ արդիւնք՝ արդարութեան, այսինքն՝
 մարդոց, ընկերութիւններու եւ ազգերու
 յարաբերութիւնները կառավարող հաս-
 տարութեան: Խաղաղութիւնը համադրու-
 թիւնն է ընկերութեան մը հանրային բա-
 րիքը կազմող տարրերուն ներգաշնակու-
 թեան: Բայց հանրային բարիքը, կառա-
 վարուելով հանդերձ իր էական յօրին-
 ուածքին մէջ յաւերժական օրէնքի՝ պատ-
 դամներէն, իր թանձրացեալ արտայայ-
 տութիւններուն եւ պահանջներուն մէջ
 պատմական բովանդակութիւն մը ունի,
 ենթակայ՝ ժամանակներու փոփոխու-
 թեան, ընկերային պայմաններու յեղա-
 ջրջումին, որոնք կը պահանջեն յարմար-
 ցումի եւ բարեփոխութեան յարատեւ ճիշ-
 մը: Այս իսկ պատճառով Խաղաղութիւնը
 կարելի չէ նկատել իբրեւ կայուն իրակա-
 նութիւն մը, որ կարենայ ստացուիլ մէկ
 անգամ ընդ միշտ: Խաղաղութիւնը չէնք
 մըն է որ պէտք է կառուցուի, կառուց-
 ուի յարատեւօրէն առանց պարտասելու
 եւ վճատելու: Շինութեան իւրաքանչիւր
 հանգրուանին մէջ՝ ան կը պատկանի ար-
 դէն յաջորդ սերունդին, ապագային վը-
 րայ նետուող ներուժականութիւն մ'ունի:
 Դիպուածով չէ որ Պօղոս Զ. ի ՄԱԿ-ի մէջ
 արտասանած ճառը յօրինուած է ամբող-
 ջապէս կառուցուող չէնքի մը պատկերին
 վրայ: Այսինքն է այդ:

Տիեզերական ժողովի խաղաղութան
մասին յայտնաբերած այս ներուժային
(dynamique) բաժնուն՝ ամենէն ինքնա-

տիպ տարրերէն մէկն է «Եկեղեցին ներկայ աշխարհի մէջ» Սահմանադրութեան : Ո՛ր մէկ երկիւղ, ուրեմն, թէ խաղաղութեան հետապնդումը լծացումի վտանգ մը առաջ բերէ : Խաղաղութիւնը հականիչն է անդործութեան եւ կայունութեան :

Այս պատճառով Ժողովը ՀՀ ուղած կիրարկել խաղաղութեան մասին Օգոստինեան ծանօթ բանաձեւը «կարգուսարքի անդորրութիւն» (tranquillitas ordinis), որ կրնար կայուն իրողութեան մը տպաւորութիւնը Թողով: Նախընտրած է խաղաղութեան զաղափարը բանաձեւել՝ մեկնելով արդարութեան զաղափարէն եւ արդարութեան թանձրացեալ պահանջներէն՝ ընկերութեան յարախօփոխ պայմաններուն մէջ:

Սակայն, խաղաղութեան չէնքը մարդե-
րէ կը բարձրանայ: Անոնց ղեւրագայթ
կամքը, ենթակայ չարին հրապոյրներ-
բուն, հրապոյրներ՝ որոնց արմատը մար-
դուն ետապաշտութիւնը եւ տիրելու բը-
նադէն է, կարող է խափանել ամէն վայր-
կեան շինութեան ծրագիրը: Կարելի է
բարեօրէն մարդոց միջեւ փոխյարաբերու-
թիւնները, առանց բարեփոխելու նոյն-
ինքն մարդը. «խաղաղութեան ստացումը
կը պահանջէ տեւական տիրապետութիւն
կիրքերու վրայ եւ հսկողութիւնը՝ օրի-
նաւոր իշխանութեան» (Գլ. Ե, հմ. 78):
Այս անհրաժեշտութիւնը չի հայեր մի-
այն պետութիւնները ղեկավարներուն,
այլ բովանդակ մարդկութեան: Խաղա-
ղութեան ամէն ծրագիր եւ նոյնինքն պե-
տական անձնաւորութիւններու լուսամիտ
դործունէութիւնը վտանգուած են ամ-
լութեան դատապարտուելու, եթէ չձուլ-
ուի մարդկութեան մէջ համաշխարհայ-
նական նոր մտայնութիւն մը, չվտար-
ուին մարդոց սիրտերէն թշնամութեան,
ցեղային ատելութեան, գաղափարախո-
սական հակակրօնական զգացումները:

1. «Յաւերժական օրէնք» կը կոչուի բնական օրէնքը, այնու որ իր հական յօրինուածքին մէջ կը զօրէ միշտ եւ ամէն տեղ, հիմնուած ըլլալով նոյնինքն մարդկային բնութեան վրայ:

